ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի **N 221**

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24.12.2020թ. N 194 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետությունում սպուգումներ անցկացնելու մասին օրենքի 10 հոդվածի Դ կետով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33 և 34 հոդվածներով, հաշվի առնելով 2021 թվականի 3-րդ եռամսյակում Գուգարքի համայնքապետարանում անցկացված վարչական սպուգման արդյունքում հայտնաբերված վրիպակը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գուգարք համայնքի ղեկավարի 2020թվականի դեկտեմբերի 24-ի 194 որոշման Բ) կետը վերաշարադրել հետևյալ կերպ. ,, Ուժը կորցրած ճանաչել Գուգարք համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 31-ի ,,Գուգարքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին,, N 142 որոշումը (նախկինում նշված 143-ի փոխարեն):

Համայնքի ղեկավար **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N **222**

ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 3.2-2՝ ԱՌԱՋԻՆԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ-ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Համայնքային ծառայության մասին,, ՀՀ օրենքի 10 հոդվածով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2 կետով և 33 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ,,Հայաստանի Հանրապետությունում սպուգումների անցկացման մասին,, ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի Դ) կետով, հաշվի առնելով ՀՀ Կառավարության 29.05.2003թ.,, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի եկամուտների հաշվառման և վճարումների ընդունման կազմակերպման կարգը,, հաստատելու մասին N 750-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գուգարքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-ֆինասիստի պաշտոնի անձնագրում կատարել փոփոխություն.

,,Իրավունքներ և պարտականություններ,, բաժնում ավելացնել հետևյալ կետերը.

ժդ) կատարում է գույքային հարկերի վճարումների ընդունման և բյուջե մուտքագրման համակարգողի պարտականությունները

ժե) ապահովում է գույքային հարկերի մուտքագրումը համայնքի բյուջե

ժզ)օրվա ընթացքում կանխիկ ընդունված գումարները, անդորրագրերի երկրորդ օրինակները, ինչպես նաև 2 օրինակից կազմված ամփոփագիրը ստանում է վճարում ընդունողներից ոչ ուշ, քան այդ օրվան հաջորդող օրը.

ժէ) ամփոփագրում կատարում է կանխիկ ընդունված գումարների և անդորրագրերի երկրորդ օրինակների հանձնման ու ընդունման մասին համապատասխան գրառում, որից հետո ստորագրված ամփոփագրի առաջին օրինակը պահում է իր մոտ, իսկ երկրորդ օրինակը հանձնում է վճարումներ ընդունողին որպես կանխիկ ընդունված գումարների և անդորրագրերի երկրորդ օրինակների հանձնումը հավաստող փաստաթուղթ:

ժը). Համակարգողը, անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարներն առանձնացնելով ըստ հարկատեսակների, դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով (պարտադիր նշելով համայնքի անվանումը) սահմանված կարգով մուտքագրում է տվյալ համայնքն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի (ՏԳԲ) համապատասխան գանձապետական հաշվին վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող 2 օրվա ընթացքում:

2. Ուժը կորցրած ճանաչել Գուգարք համայնքի ղեկավարի 2016թվականի փետրվարի 25-ի ,,Գուգարքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին,, N 28-Ա որոշման N 6 հավելվածը:

Համայնքի ղեկավար՝ **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի **N 223**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ԿԱՐԵՆԻ ՔԱՐՀԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0204-0048 ԾԱԾԿԱԳՐԻ 0,45425 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀօրենքի 45-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 17.09.2009թ. 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին հավելվածի 7-րդ և 8-րդ կետով և ՀՀ Լոռու մարզի Գուգարք համայնքի 22.10.2021թ. N 75 ավագանու որոշումով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշումով՝

որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Գուգարք համայնքի բնակիչ Հայկ Կարենի Քարհանյանի սեփականությունը հանդիսացող կադաստրային քարտեզի 06-031-0204-0048 ծածկագրի 0,45425 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքը սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի համաձայն փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության :

2. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրային կոմիտեի մարզային ստորաբաժանումում:

4. Հողամասի համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝ գ.Գուգարք , փողոց 4, 7/4 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N **224**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0017-0061 ԾԱԾԿԱԳՐԻ ՄԵԼԱՆՅԱ ԱՇՈՏԻ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով,ՀՀ կառավարության 29.12.2005թ.N 2387 Ն որոշումով՝

որոշում եմ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0017-0061 ծածկագրի, Մելանյա Աշոտի Պապիկյանին պատկանող կիսակառույցի համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝

գ. Գուգարք, Քոթեջային 4 փողոց, 14/1 կիսակառույց:

Համայնքի ղեկավար՝ ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N **225**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը հաստատելու մասին» N 11որոշմամբ և հիմք ընդունելով Գուգարք համայնքի բնակիչներից ստացված դիմումները՝

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն.

1. Սոլոմոնյան Աննա - 40000դրամ
2. Գրիգորյան Ամալիկ - 60000դրամ
3. Մադոյան Յուրիկ- 60000դրամ:

Համայնքի ղեկավար՝ **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի **N 226**

06-031-0017-0040 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՔՈԹԵՋԻ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387Ն որոշումով՝

որոշում եմ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0017-0040 ծածկագրի տակ գտնվող 0,040005 հա բնակելի կիսակառույց քոթեջի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992թ.կառուցված 105,28 քմ մակերեսով կիսակառույց քոթեջի նկատմամբ Գրիշա Կառլենի Սեդրակյանի (ծնվ. 15.08.1951թ.) սեփականության իրավունքը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,040005 հա հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Գրիշա Կառլենի Սեդրակյանին:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ:

4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝ գ. Գուգարք, Քոթեջային 4-րդ փողոց, 11/1 կիսակառույց:

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N **227**

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՇՈՒՂՅԱՆԻ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 181 հոդվածով, հաշվի առնելով ,,Վարչապարածքային բաժանման մասին,, ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ,, Հայաստանի Հանրապետության 24.09.2021թվ. ընդունված օրենքը , ՀՀ Լոռու մարզպետի 14.07.2008թ. N 222-Ա որոշումը և հաշվի առնելով, որ 25.10.2021 թվականին լրանում է համայնքի ղեկավարի պաշտոնավարման հնգամյա ժամկետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

2021 հոկտեմբերի 26-ից համարել դադարած Գուգարք համայնքի ղեկավար Աշոտ Անուշավանի Աշուղյանի՝ Գուգարք համայնքի ղեկավարի լիազորությունները:

Համայնքի ղեկավար՝ **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի **N 228**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 27 հոդվածի 1-ին մասով, 2.1 մասով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 25.10.2021թ.N 635-Ա որոշումը՝

որոշում եմ

Ես՝ Աշոտ Անուշավանի Աշուղյանս, 2021թվականի հոկտեմբերի 26-ից ստանձնում եմ Գուգարք գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատարի լիազորությունները:

Համայնքի ղեկավար՝ **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 0322-3-93-30, gugarq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի **N 229**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը հաստատելու մասին» N 11որոշմամբ և հիմք ընդունելով Գուգարք համայնքի բնակիչներից ստացված դիմումները՝

որոշում եմ.

սոցիալապես անապահով ներքոհիշյալ ընտանիքներին տալ դրամական օգնություն.

1. Զոհրապ Հակոբյան - 50000դրամ
2. Նազիկ Գալստյան - 50000դրամ
3. Մերի Գրիգորյան - 50000դրամ
4. Արտեմ Ավետյան - 30000դրամ.
5. Աշոտ Զաքարյան - 40000դրամ
6. Նյուտոն Աղաջանյան - 40000դրամ
7. Սյուզաննա Գրիգորյան - 35000դրամ:

Համայնքի ղեկավար՝ **ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ**